

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

## ԺԴ ԴԱՐՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՄՈՄԻԿԻ ՄԱՍԻՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1968 տարվո թիվ 3-ի մեջ ճարտ. դր. Ս. Խ. Մնացականյան հրատարակած էր շահեկան հոդված մը «XIV դարի հայ քանդակագործ ճարտարապետ և նկարիչ Մոմիկը» խորագրով, ուր գործին ամբողջության համար կարծեր որ նկատի առնվեր Մոմիկի կենսագրության համար անհրաժեշտ հիշատակարան մը, որ հրատարակած էի «Բազմավայի» 1947 տարվո թիվ 9—10-ի մեջ, էջ 216:

Միացյալ Նահանգներու Քընդդիքեդ նահանգին Հարդֆորտ քաղաքին Յունիոն Քեոլոչիկալ հաստատության մատենադարանին մեջ կպահվին 21 հայերեն ձեռագիրներ, որոնց մեջ է նաև մագաղաթյա, ընտիր մանրանկարներով (Քորոս Տարոնեցի) Ավետարան մը, որուն հիշատակաբանին կարևոր մասը «Բազմավայի» մեջ տված էի և դարձյալ հոս կուտամ: Այս հիշատակարանը վրիպեր է նաև Լ. Խաչիկյանի ուշադրությունեն իր «Հիշատակարաններուն» Ա հատորին մեջ:

«Այսպիսի լուսազարդ վարդապետութեան» և փրկաւետ գանձուց փափագող եղբաւ տեղեկն իմաստից՝ և շտեմարանն ամենայն խորոց հանճարոյ՝ տ[է]ր Օրպէլի՝ Յովհանէ՛ վերատեսուչ գահերեց երից աթոռոց՝ Տաթևոյ և Նորավանից և Յաղաց Քարոյ՝ գլուխ երկուտասան գաւազանաց: Եռափափագ սիրով ետ գրել ինձ մեղապարտ տիմար՝ և փանաթի գրչի Մոմկայ՝ ի հրեշտակերամ մենաստանիս Նորավանիս, ի դամբարանի մեծ և պատուաւոր իշխանացն Սմբատայ և Տարսայիճին: Յաղագս փրկութեան հոգոյ և մարմնոյ... մեծ քաջաղար իշխանաց իշխանին Բիրթէլին... և ա[ստուա]ծազարդ կողակիցն իր՝ արթայաշուք դշխոյափառն Վախախ՝ ...երկուց ա[ստուա]ծատուր հարազատ գաւակաց իւրեանց Բէշթէնին և Իւանէի...:

Արդ եղաւ զրաւ գրչութեան]ս ի ժամանակին և ի թուարբերութեան 202 (1307) յորում լան Ղարբանդայն գնաց ի վերայ Քալըշին: ...Եւ զԽուրուշահ հարին՝ ոնո նմայ էին Բիրթէլն և Չեսարն՝ որ խաղաղութեամբ դարձան: Բայց զաւրացն պակաս մնացին: Ի նմին ամի՛ յաւուրսն աշնան Ես Մոմիկ գրիչ և Պաւղոս վարդապետն երկու աւետարան սկսեալ հրամանաւ տ[է]ր Օրպէլ Յովանիսի կատարեցաք՝ բայց ես յաչաց վատեալ զհամարաւ[բար]սն և զճապաղացանկն և զոսկենկարսն ոչ կարացի ի գլուխ հանել: Աւաղ և եղուկ իմոյ տկարութեան]ս զի իմով ձեռամբ ոչ եղեւ:

Բայց յետոյ Յովհանէս գրիչ զթերին ելից, և Քորոս զոսկենկարսն: Յուսովն որ առ Յ[խոս] զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թուխ 22 (1331) և զյիշատակարանս արարի և գրեցի հրամանաւ տ[է]ր Տարսայիճին, մականուն, տ[է]ր Ստեփանոսի, որդոյ Ջալալին: Որ հրամանաւ և արդեամբք մեծ պարոնին Բիրթէլին յայսմ ամի զարդարեաց զաւետարանս ոսկով և արծաթով ի մայրաքաղաքիս յԵղեգիս՝ ի Նորավանս զոր իւրով ի նոր շինեալ եկեղեցի կատարեաց՝ յանուն սրբուհոյ ա[ստուա]ծածնին, և սրբոյն Նիկողայոսի՝ և Քրիստափորոյ սրբոյ: Եւ բաւական վերջ՝ «Մեղուցեալ գրչիս Մոմկայ աշխատողի ի սմա ողորմեացի ժրիստոյ]ս և վարձս բարեաց հատուցէ նմայ»:

Հիշատակարանս շատ պարզ կերպով ցույց կուտա, որ Մոմիկ 202 (1307) թուականին աշնան կըսկսի Ավետարանին գրչության, սակայն առանց կարենալու Ավետարանին համարարանները և ճապաղներուն ցանկերը գրելու և մանրանկարելու («զոսկենկարսն») այլաց վատեալ, այսինքն աչքացավութիւնն կղաղրի ավաղելով՝ «Աւագ և եղուկ իմոյ տկարութեանս զի իմով ձեռամբ ոչ եղեւ» և կհիշե շովհաննես գրիչ, որ զթերին ելից», այսինքն գրեց համարարանները և ճապաղներու ցանկը, և Քորոս՝ զզոսկենկարսն», այսինքն մանրանկարները: Հոս հիշված Քորոս մանրանկարիչը Տարոնեցին է, որ սքանչելի կերպով մանրանկարած է այս Ավետարանը:

Մոմիկ երևա, որ տարապայման աչքացավի պատճառով 202 (1307) թվականեն մինչև 22 (1331) անկարող կըլլա զըզգրական և մանրանկարչական գործով զբաղելու: 1331 թ. լոյս աչաց իմոց դարձաւ առ իսս կգրե Մոմիկ: Ուրեմն հարց է՝ կրնա՞ր Մոմիկ 1308-ին Քամթա խաթունի համար խաչքար կազմել: Կամ կրնա՞ր 1321-ին Արփայի եկեղեցին իր հատակագիծերով, պատկերաքանդակներով և այլն ամբողջացնել, ինչպես որ Ս. Խ. Մնացականյան կներկայացնեն իր հոդվածին մեջ:

1307—1331 մոտավորապես 25 տարվան աչքացավի շրջան մը ունեցել է Մոմիկ, այնքան սաստիկ, որ եթե բուրոսին կուրացած ալ շէր, իրեն համար ցավալիորեն անկարելի էր Ավետարանը ամբողջացնել ու ծաղկել: Խաչքարի համար, ինչպես նաև եկեղեցու շինության հատակագիծերու, զարդաքանդակներու, պատկերաքանդակներու համար հոգնեցուցիչ աչքի տեսողություն կկարողտի, որուն համար իր անկարողությունը այնքան տխրութեամբ կխոստովանի Մոմիկ: Ուրեմն Մոմիկ 1308-են առաջ պատրաստած էր Թամթա խաթունի խաչքարը, 1307-ին աշունեն առաջ: Իսկ Արփայի եկեղեցին գուցե 1331-ին, նկատելի է, որ մեր վերը տված հիշատակարանին մեջ կհիշե Մոմիկ Նորավանի «ի նոր շինեալ եկեղեցի», սակայն ոչ մեկ անարկություն անոր շինության իր մասնակից ըլլալուն համար:

Կարծե վերոհիշյալ հիշատակարանը նկատի առնել Մոմիկի կենսագրության համար իբր շատ կարևոր ազբյուր:

Հ. ՔՅՈՒՐԴՅԱՆ (ԱՄՆ)